ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **24.12.2019թ. ժամը 15:30**

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲԱ ապահովման բաժնի պետ Ա.Նազարյանը,

գնահատողներ՝

- ՀՀ ԶՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ բ/ծ փոխգնդապետ Վ.Վահանյանը,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲԱԱ բաժնի գլխավոր մասնագետ Հ.Ավետիսյանը,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Մ.Ամիրյանը:

Բացակայում էր - ՀՀ ՊՆ ՎՀՄԲԿ բժիշկ Գ.Անտոնյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ.Ամիրյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի և ԳԲԲԱ-ի կողմից կայացված որոշման մասին
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման և ընտրված մասնակցին հայտարարելու մասին

(Մ.Ամիրյան)

1.1 Քանի որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի **05.12.2019թ.**-ին տրամադրած՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման մասին տեղեկատվության համաձայն **«Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ**-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող:

03.12.2019թ-ին գնումների համակարգող Մ.Ամիրյանը www.armeps.am համակարգի միջոցով ծանուցեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում և կարգով /3 աշխատանքային օրվա ընթացքում/ ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ m.amiryan@mil.am էլեկտրոնային հասցեին: Սահմանված ժամկետում մասնակիցը ուղարկել է վերը նշված փաստաթղթերը:

Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ հրավերի պայմաններին, մասնավորապես.

Հ/հ	հրավերով սահմանված տեխնիկականբնութագիր	**«Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիր**
4	Ալգինատային չափսանյութ արտադրության, 453gr, ստվարաթղթե վակումային փաթեթավորմամբ, 5 օր ստաբիլությամբ, մրգային համով, դեղին փոշի, բերանում գտնվելու ժամանակը 45 վայրկյան :Շաղախման ժամանակը՝ 30 վայրկյան: Ընդհանուր ժամանակ 1 րոպե 50 վրկ.: ISO 1563/ADA 18	Ալգինատային չափսանյութ արտադրության, 453gr, ստվարաթղթե վակումային փաթեթա-վորմամբ, 5 օր ստաբիլությամբ, մրգային համով, մանուշակագույն փոշի, բերանում գտնվելու ժամանակը 45վայրկյան :Շա-ղախման ժամանակը՝ 30 վայրկյան: Ընդհանուր ժամանակ 1 րոպե 50 վրկ.: ISO 1563/ADA 18
10	Թղթե շտիֆտ MMPP SP60 միլիմետրային սանդղակով, 200 հատ կամ այլ քանակի: asorti	Թղթե շտիֆտ միլիմետրային սանդղակով, 200 հատ :asorti
11	Գուտ. շտիֆտ DIA-PROISO 02 04 և 06 կոնայնությամբ, միլիմետրային սանդղակով: 0,29ml dia-pro iso.06 N15,N20,N25,N30 N35: Գործարանային փաթեթավորմամբ:	Գուտ. շտիֆտ ISO 02 04 և 06 կոնայնությամբ, միլիմետրային սանդղակով: 0,29ml Iso.06 N15,N20,N25,N30, N35: Գործարանային փաթեթավորմամբ:

34	M4 ելանցքով, կերամիկական գնդառանցքակալ, 8 անցք, որից չորս կետային սպրեյ և չորս օդ մղող անցք, գլխիկի լվացման համակարգով,գլխիկի չափսերը 12.1*13.3մմ, 340000-410000պտույտ րոպեում, բորի բռնիչը սեխմակով:	M4 ելանցքով, կերամիկական գնդառանցքակալ, 8 անցք, որից չորս կետային սպրեյ և չորս օդ մղող անցք, գլխիկի լվացման համակարգով,գլխիկի չափսերը 12.1*13.3մմ, 360000-430000պտույտ րոպեում, բորի բռնիչը սեխմակով:
35	M4 ելանցքով, հավաքծուն պարունակում է ուղիղ և թեք ծայրակալներ և միկրոմոտոր, ուղիղ ծայրակալը պետք է նախատեսված լինի 2,35մմ HP բորերի համար և ունենա 40000 պտույտ/րոպե, թեք ծայրակալը՝ 2,35 մմ CA բորերի համար, մինչև 40000 պտույտ/րոպե, միկրոմոտորը 62,4գ քաշով, չափը 40,8մմ, 22000 պտույտ/րոպե	M4 ելանցքով, հավաքծուն պարունակում է ուղիղ և թեք ծայրակալներ և միկրոմոտոր, ուղիղ ծայրակալը պետք է նախատեսված լինի 2,35մմ HP բորերի համար և ունենա 40000 պտույտ/րոպե, թեք ծայրակալը՝ 2,35 մմ CA բորերի համար, մինչև 40000 պտույտ/րոպե, միկրոմոտորը 88գ քաշով, չափը 40,8մմ, 22000 պտույտ/րոպե

Համաձայն հայտը նախագծող անձի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23» ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացված մասնագիտական եզրակացության

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23» ծածկագրով ԳՀ ընթացակարգի շրջանակում «Էսզեթ ֆարմա» ՍՊ ընկերության կողմից թիվ 4, 10, 11, 34 և 35 չափաբաժիններով առաջարկված ապրանքատեսակներ իտեխնիկական բնութագրերի և նշված չափաբաժինների՝ հրավերով պահանջված տեխնիկական բնութագրերի հետ առկա տարբերություններն էական չեն,և առաջարկվող ապրանքատեսակները կարելի է համարել համարժեք: Մասնավորապես.

-4-րդ չափաբաժնով առաջարկված «Այգինատի» տարբերակիչ կոնկրետ գույնը բացարձակ նշանակություն չունի կիրառման դեպքում: Գունային տարբերակումը նախատեսված է միայն սպիտակ գույնի այլ նյութերի հետ վերջինս չշփոթելու համար:

-10-րդ չափաբաժնով առաջարկված «Թղթե շտիֆթ»-ի համար «MMPP60» գրառումը էական չի, քանի որ այն վերաբերում է ֆիրմային նշանին, և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջների համաձայն ցանկացած հղման դեպքում կիրառվում է «կամ համարժեք» բառերը, ինչը սահմանված է նաև հրավերով:

-11-րդ չափաբաժնով առաջարկված «Գուտապերչե գամիկներ»-ի համար «DIA-PRO» գրառումը էական չի, քանի որ այն վերաբերում է ֆիրմային նշանին, և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջների համաձայն ցանկացած հղման դեպքում կիրառվում է «կամ համարժեք» բառերը, ինչը սահմանված է նաև հրավերով:

- 34-րդ չափաբաժնով առաջարկված տուրբինային ծայրակալները ունեն 360000-430000 պտույտ/րոպե պտտման արագություն և տեխնիկական հնարավորություններով գերազանցում են հրավերով պահանջված 340000-410000 պտույտ/րոպե արագությամբ ծայրակալներին, առավել ժամանակակից են, որակյալ և դիմացկուն:

-35-րդ չափաբաժնով առաջարկված NSK ընկերության կողմից արտադրված ուղիղ և թեք ծայրակալներով և միկրոմոտորով հավաքածուի մեջ պարունակվող 88գ քաշով միկրոմոտորը, հրավերով պահանջված 62 գրամանոց միկրոմոտորից առավել հզոր է և ժամանակակից և ապահովում է այն արդյունքը, որի համար նախատեսված է տվյալ ապրանքատեսակի ձեռքբերումը:

06.12.2019թ. /հրապարակվել է 09.12.2019թ./«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է բողոք՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23» ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին արգելելու ընդունել «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին **որոշում ընթացակարգի** 1, 2, 3, 4, 6, 10, 11, 13, 14, 16, 17, 18, 19, 20, 21, 24, 25, 27, 28, 29, 30, 32, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 48, 49, 50, 51, 52, 54-րդ չափաբաժինների մասով:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի Գնումների հետ կապված բողոքներ **քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝** սույն **օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից** մինչև **բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:**

19.12.2019թ. /հրապարակվել է 23.12.2019թ./ՀՀ Գնումների հետ կապված **բողոքներ քննող անձը որոշել է «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժել:**

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը և ԳԲԲԱ-ի կողմից կայացված որոշումները **հրապարակված են www.gnumner.am կայքում:**

1.2 **24.12.2019թ.** Հիմք ընդունելով հայտը նախագծող անձի կողմից գնահատող հանձնաժողովին ներկայացված մասնագիտական եզրակացությունը և հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց **«Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ի** որակավորման չափորոշիչները գնահատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23»** ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող, վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից՝ այն չափաբաժինների մասով՝ որտեղ ճանաչվել էր 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ.Ամիրյան)

2.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել ոչ ուշ քան գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվա ժամը 17:10-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)		Ա.Նազարյան
Գնահատող		Վ.Վահանյան
Գնահատող		Հ.Ավետիսյան
Գնումները համակարգող		Մ.Ամիրյան